‘ԻՆՏԵՐԱԿՏԻՎ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ’ ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ 2022

Հետազոտական աշխատանք

ԹԵՄԱ Սովորողների մեջ արժեհամակարգի ձևավորումը առարկայի դասավանդման ընթացքում:

ԱՌԱՐԿԱ Դասվար

ՀԵՂԻՆԱԿ Հայարփի Չախայյան

ՄԱՐԶ Արագածոտն

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ Այլագյազի Շ. Մհոյանի անվան միջնակարգ դպրոց

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ----------3

1. Ի՞նչ է <<արժեք>> ասածը----------5

2. Հոգեբանական գիտության բնագավառում արժեքների

մեկնաբանությունը----------6

3. Սովորողների մեջ արժեքային համակարգի
ձևավորումը դասաժամին----------10

4. Ուսուցչի դերը արժեհամակարգի ձևավորման

գործընթացում----------15

Եզրակացություն----------17

Գրականության ցանկ----------19

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Սովորողների դաստիարակության իրականացումը միշտ էլ եղել ու մնում է կրթության կարևորագույն խնդիրներից մեկը: ճիշտ է, ժամանակակից արևմտյան կրթական մոտեցումներում դաստիարակության խնդիրը փոխարինվում է արժեքների ձևավորման խնդրով, բայց դրանից հարցի էությունն չի փոխվում: Սակայն այդ մոտեցումներում կտրուկ փոխվել են շեշտադրումները, որոնց առանցքը կազմում է կրթության նոր հարացույցը, ավտորիտար համակարգերին հատուկ գիտելիքի տիրապետմանն ուղղված կրթությանը գալիս է փոխարինելու ժողովրդավարական համակարգերին հատուկ՝ արժեքների ձևավորմանն ուղղված կրթությունը : Եթե ավտորիտար համակարգերում կարևորվում է գիտելիքը, որովհետև այն հնարավորություն է տալիս պատրաստելու պետության և հասարակության այս կամ այն խնդիրը, պահանջը իրականացնելուն ունակ մասնագետ, ապա ժողովրդավարական համակարգերում հիմնական արժեքը մարդն է, որի բարօրությունը համարվում է գերակա խնդիր: Եվ ադ բարօրությունը պայմանավորվում է մարդու արժեքների աշխարհով, արժեքային կողմնորոշումով: Բարոյական արժեքները կազմում են մարդու արժեքային համակարգի կարևորագույն մասը: Իսկ որտե՞ղ պետք է ձևավորվեն այդ արժեքները՝ ընտանիքո՞ւմ, շրջապատո՞ւմ, եկեղեցո՞ւմ, թե՞ դպրոցում: Հետազոտողները, կարևորելով բոլոր այս օղակների դերը, կանգ են առնում նաև վերջին օղակում՝ հանրակրթական դպրոցում արժեքների ձևավորման խնդրի վրա :

Մեր իրականության մեջ դրա իրագործումը կապված է առանձնակի դժվարությունների հետ. հասարակական և տնտեսական նոր փոխհարաբերություններ, կրթական նոր մոտեցումներ՝ նոր տեխնոլոգիաների, արևմտյան փորձի ներդրում, ազգային արժեքների իմաստավորում և այլն: Ուսուցչության մի զգալի հատվածի մոտ առկա են նաև նոր մոտեցումների, դրանց իրականացման և տիրապետման հետ կապված մասնագիտական և հոգեբանական դժվարություններ: Հարկ է նշել, որ հանրակրթության պետական կրթակարգում և հանրակրթական ուսումնական առարկաների չափորոշիչներում որոշակի ուշադրություն է դարձվում բարոյական արժեքներին : Իմ կարծիքով բարոյական դաստիարակությունը պետք է իրականացնել ոչ թե աշակերտի վարքի մեջ այս կամ այն շեղումը նկատելիս համապատասխան խրատներ տալով, այլ յուրաքանչյուր ուսումնական առարկայի դասավանդման ընթացքում դաստիարակության բովանդակությունը կազմող արժեքների հետևողական ձևավորման միջոցով: Հարկ

է նկատել, որ հանրակրթական դպրոցի յուրաքանչյուր ուսումնական առարկա ունի նման արժեքների ձևավորման համար անհրաժեշտ կրթական ներուժ:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Աշխատանքի արդիականությունը պայմանավորված է նրանով, որ հատկապես մեր օրերում կարևորվում են նախադպրոցականների, դպրոցականների և առհասարակ հայի բարոյական դաստիարակությունը, բարոյական կերպարի կերտումը և արժեհամակարգի ձևավորումը,երբ սկսած հեռուստատեսությունից (որոշ հեռուստասերիալներ), սոցիալական ցանցերից մինչև յութուբյան ալիքներ, մեղմ ասած նպաստում են դպրոցականների արժեհամակարգի խեղաթյուրմանը: Դա է պատճառը, որ կարևորում ենք ժամանակակից դպրոցական համակարգում և հատկապես կրտսեր դպրոցականների շրջանակներում, ճիշտ կազմակերպել աշխատանքները բարոյագիտական որակների և պատկերացումների ձևավորման և զարգացման ուղղությամբ, ինչը կնպաստի բարոյական դաստիարակության արդյունավետության բարձրացմանը:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿԸ

Աշխատանքի նպատակն է բացահայտել դպրոցում արժեհամակարգի ձևավորման,բարոյական արժեքների դաստիարակության էությունը, բովանդակությունը, իրականացման սկզբունքներն ու մեթոդները՝ վերլուծելով կրտսեր դպրոցականի տարիքային առանձնահատկությունները ու դրան համապատասխան արժեքների ձևավորման խնդիրները:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Աշխատանքի նպատակից բխում են հետևյալ խնդիրները.

1. Վերլուծել համապատասխան թեմային առնչվող գրականությունը
2. Բացահայտել դպրոցում արժեհամակարգի ձևավորման, բարոյական արժեքների դաստիարակության էությունը, բովանդակությունը
3. Ուսումնասիրել դպրոցում արժեքային համակարգի ձևավորման սկզբունքներն ու մեթոդները
4. Վերլուծել կրտսեր դպրոցականի տարիքային առանձնահատկությունները
5. Բացահայտել դպրոցականի մեջ արժեքների ձևավորման առավել արդյունավետ մեթոդները

1.Ի՞ՆՉ Է ‘ԱՐԺԵՔ’ ԱՍԱԾԸ

Երեխաների կրթության մասին խոսելիս՝ մենք հաճախ օգտագործում ենք «արժեքներ» հասկացությունը: Բոլորս կարևորում ենք արժեքների ձևավորումը գալիք սերնդի մոտ եւ միգուցե այդ բառին ինչ-որ ենթագիտակցական իմաստ ենք հաղորդում: Փորձենք ձևակերպել, թե ինչ է ի վերջո «արժեք» ասածը:

Արժեքը, աշխարհի յուրահատուկ ընկալումն է, որը ձևավորվում է ոչ միայն ձեռք բերված գիտելիքի և ինֆորմացիայի, այլև սեփական կենսափորձի հիման վրա:

Մշակույթը խիստ կապված է մարդու արժեհամակարգի հետ: Նեղ իմաստով՝ արժեքը մարդու համար իրի, առարկայի կամ երևույթի դրական նշանակությունն է: Արժեքը մարդու վերաբերմունքն արտահայտող ցուցանիշ է, որի կարևոր կատեգորիաներից են ՝ **հավատն ու սերը**:

Հավատը ծնում է հույս և մղում մարդուն ապրելու, ստեղծելու, արարելու: Հավատը դառնում է կողմնորոշիչ մարդու կյանքի և գործունեության համար: Մարդիկ քանի դեռ ապրում են՝ հավատում են, քանի դեռ հավատում են՝ ապրում են:

Սերը մյուս մարդկանց հետ միավորվելու ձգտումն է: Սիրո մեջ միավորվում են մարդու արժեքային պատկերացումները:

Արժեքները բավարարում են սուբյեկտի կենսական պահանջմունքները և իմաստավորում են կյանքը: Սուբյեկտի արժեքները միավորվելով կազմում են մի ամբողջական համակարգ: Անձի մասին կարելի է դատել նրան առավել բնորոշ արժեքներով, որոնք գոյացնում են անձի ներաշխարհը: Իսկ ինչ վերաբերում է ազգային արժեքներին, դրանք բախտորոշ նշանակություն ունեն և ձևավորվում են պատմական զարգացման ընթացքում, կազմում ներկա կեցության հիմքը և բնականոն գոյության ու անխափան զարգացման երաշխիքը: Ազգին հատուկ արժեքներն արտացոլվում են նրա ինքնագիտակցության տարբեր ձևերում՝ արվեստի, փիլիսոփայության, բարոյականության, կրոնական պատկերացումների բանահյուսության մեջ: Ազգի արժեհամակարգը պետք է յուրացնի յուրաքանչյուր անհատ հանրության մեջ բնականոն գործելու համար:

Արժեքների մեծ մասը սնվում է էթիկական նորմերից, ձևավորվում է դրանց շնորհիվ: Էթիկական նորմերը անհրաժեշտ են մարդկանց համակեցությունը ապահովելու

---

https://mediamax.am/am/column/12925/

https://hy.wikipedia.org/wiki/%D4%B1%D6%80%D5%AA%D5%A5%D6%84%D5%B6%D5%A5%D6%80

համար՝ դրանք պարտադրում են հրաժարվել ցանկալիից հանուն ընդհանուր շահի: Դրանք տարբեր են ոչ միայն տարբեր հասարակություններում, այլև անգամ հասարակության տարբեր շրջանակներում, նույն երկրի տարբեր տարածքներում:

Հիմա անդրադառնանք բարոյականությանը: Եթե էթիկական նորմերը ծառի արմատներն են, իսկ արժեքները՝ բույնը, ապա բարոյականությունը դրա սաղարթն է: Բարոյական է այն ամենը, ինչը նպաստում է արժեքների պահպանմանը և չի հակասում դրանց: Անբարոյական է ամենը, ինչը դեմ է արժեքներին և բերում է դրանց քայքայման:

Երբ փլուզվում են արժեքները, խախտվում է համակեցությունը և տարածվում անբարոյականությունը: Մարդիկ դժբախտանում են, տնտեսությունն անկում է ապրում, հանցագործությունները դառնում են համատարած, կյանքը կորցնում է իմաստի զգալի մասը, մարդիկ սկսում են հեշտությամբ իրար կոտորել:

Հենց այս պատճառով է, որ կրթության հենքը եւ գլխավոր իմաստը պետք է դառնա արժեհամակարգի ձեւավորումը: Դպրոցը պետք է լինի օրինակելի տարածք, ուր հաստատուն են էթիկական նորմեր, ուր աշակերտները սովորում են դրանց համապատասխանել:

2. ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ԱՐԺԵՔՆԵՐԻ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Հոգեբանական գրականության վերլուծության արդյունքները ցույց են տալիս, որ յուրաքանչյուր հասարակություն, սոցիալական խումբ, հասարակական խմբավորում ստեղծում է իրեն հատուկ ընդհանուր և յուրահատուկ արժեքային համակարգեր և վարքականոններ, որոնք արտահայտում են նրանցում գերակայող հետաքրքրությունները և նպատակները: Այդ հասարակությանը պատկանող մարդը ընդունում է դրանք որպես իր վարքի չափանիշ: Անձնային արժեքը մարդու մասին գիտությունների՝ փիլիսոփայության, հոգեբանության, մանկավարժության, սոցիոլոգիայի և այլ գիտությունների կարևոր խնդիրներից մեկն է: Չնայած որ արժեքների հոգեբանական սահմանումների մեծամասնությունը հիմնվում են արժեքների և արժեքային կողմնորոշումների փիլիսոփայական և սոցիոլոգիական

ՀԱՆՐԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ 3-4 /2017 ՆԱՆԵ ՉԵՅՆԱԼՅԱՆ ՀՀ պետական կառավարման ակադեմիայի ասպիրանտ. https://www.bok.am/sites/default/files/2020-12/2.pdf

հայեցակարգերի վրա, անձնային արժեքների հոգեբանական հասկացումը էապես տարբերվում է այլ գիտություններում արժեքների մեկնաբանությունից:

Հոգեբանական գիտության բնագավառում արժեքների մեկնաբանության բազմազանության մեջ առավել տարածում ունի այն մոտեցումը, որում արժեքը դիտարկվում է որպես հասարակության կենսագործունեության որոշակի արդյունք: Հոգեբանական գիտության բնագավառում անձնային արժեքների հասկացման գերակայող մոտեցումներից մեկը այն է, որ արժեքը դիտվում է որպես պահանջմունքներին և շարժառիթներին համարժեք հասկացություն:

Անձի արժեքային համակարգի ձևավորման և շարժընթացի խնդիրը ընդունված է դիտարկել հոգեկան զարգացման ընդհանուր օրինաչափությունների համատեքստում: Այն անմիջականորեն կապված է տարիքային զարգացման առանձնահատկությունների հետ:

Որպես անձնային արժեքների ձևավորման նախադրյալներ՝ դիտարկվում են սոցիալականացման առանձնահատկությունները, տարիքային զարգացման փուլերը, երեխայի ինտելեկտուալ զարգացումը, կրթությունը, տեղեկույթը, մակրո- և միկրոմիջավայրի առանձնահատկությունները: Անձի արժեքային համակարգի ձևավորումն իրականանում է մի շարք գործոնների ազդեցությամբ: Այդ գործոններն են ընտանիքը, հասարակությունը, դպրոցը, շրջապատի սոցիալական արժեքները և այլն:

Ն. Ժուրավլյովան արժեքային կողմնորոշումների ձևավորման կարևոր նախապայման է համարում վաղ սոցիալականացման պայմանները : Արժեքային համակարգի ձևավորումն անհնար է պատկերացնել հասարակությունից, մարդկանց հետ շփումից զատ: Անձի արժեքների համակարգը ձևավորվում է սոցիալականացման ընթացքում ինտերիորիզացիայի (ներքնայնացման)՝ հասարակական-քաղաքական, բարոյական, գեղագիտական իդեալների (հասարակական փորձ և մշակույթ) յուրացման միջոցով, որոնք բնորոշ են տվյալ սոցիալական հանրությանը: Արժեքային համակարգի ձևավորումն ընթանում է դաստիարակության և կրթության ընթացքում սոցիալական փորձի յուրացման միջոցով: Անձնային արժեքները ձևավորվում են սոցիալականացման ամբողջ

Журавлева Н. А., Психология социальных изменений: ценностный подход. - М.: –зд-во «Институт психологии РАН», 2013. – 524 с.

ընթացքում:

Ն.Ժուրավլյովան անձի արժեքային համակարգի ձևավորման գործում կարևորում է անձի կյանքի մակրո- և միկրոսոցիալական պայմանները, ինչպես նաև նրա սոցիալական և մասնագիտական բնութագրերը: Մակրոսոցիալական պայմանների շարքում կարևոր են համարվում հասարակության կյանքի սոցիալ-տնտեսական, սոցիալ-մշակութային, սոցիալ-քաղաքական և գաղափարական, ինչպես նաև հոգևոր պայմանները, սոցիալական նորմերը (բարոյականության, իրավունքի, կրոնի և այլն), պատմական ժամանակահատվածի առանձնահատկությունները, տարածաշրջանային պայմանները, հասարակությունում գերակշռող արժեքները: Անձի արժեքների համակարգը հիմնված է այն հասարակության գաղափարախոսության վրա, որին նա պատկանում է: Տարբեր գաղափարախոսությունների դեպքում առաջնությունը կարող է տրվել տարբեր արժեքների:Անձն իր զարգացման ընթացքում ներգրավվում է տարբեր փոքր և մեծ խմբերի մեջ: Դրանցից յուրաքանչյուրի կյանքում մասնակցությունն անհատի մեջ ձևավորում է որոշակի բնորոշ գծեր: Նրա անձնային հատկությունները ձևավորվում և զարգանում են կախված որոշակի սոցիալական շերտին, ազգին, էթնիկ խմբին, մասնագիտական կատեգորիային, ընտանիքին և այլ խմբերին պատկանելությունից: Աշխարհի մասին պատկերացումները, բարոյական հայացքները և համոզմունքները, մտածելակերպը և աշխարհայացքը, հետաքրքրությունները, ձգտումները և արժեքները պայմանավորվում են խմբային գիտակցության առանձնահատկություններով, որում անձը ձևավորվում է և որում ընթանում է նրա առօրյա գործունեությունը:

Փոքր սոցիալական խումբը ոչ միայն անձին առաջարկում է որոշակի արժեքներ, այլև ինչ-որ չափով ազդում է անձի վրա՝ ուղղորդելով նրան դեպի այդ արժեքները: Մի կողմից խումբը և դրա առանձին անդամներն են ազդեցություն գործում անձի վրա, մյուս կողմից՝ անձն ինքն է ազդեցություն գործում խմբի մյուս անդամների և ամբողջ խմբի վրա: Հարմարվելով, ինտեգրվելով և անհատականանալով խմբում՝ յուրաքանչյուր անձ, իր հերթին, ազդեցություն է ունենում խմբի, դրա արժեքների, արժեքային կողմնորոշումների և արժեքային դիրքորոշումների վրա: Դ. Լեոնտևը համարում է, որ սոցիալական արժեքների յուրացումը միշտ միջնորդավորված է

Леонтев Д. А., Развитие личностных ценностей в общественном контексте, Вестник Московского Университета. Сер. 14. Психология. 1997. №1. сс. 20-27.

անհատի համար ռեֆերենտային փոքր խմբերի արժեքներով: Նա շեշտում է, որ անհատական զարգացման նախնական փուլերում այդպիսի խումբ է ընտանիքը, իսկ դեռահասության տարիքում՝ հասակակիցների խումբը:

Գ. Մ. Անդրեևան, որպես արժեքների անհատական համակարգի ձևավորման միջավայրային գործոններ, առանձնացնում է ընտանիքը, դպրոցը, աշխատանքային կոլեկտիվը, որոնք «սոցիալական փորձի միջնորդ» են, որոնցում անձը հաղորդակցվում է նորմերի և արժեքների համակարգի հետ:

Ա. Վ. Մուդրիկն առանձնացնում է սոցիալականացման գործոնների չորս խումբ: Հեղինակը մեգագործոնների շարքին է դասում համաշխարհային գործընթացները, որոնք այս կամ այն չափով ազդեցություն են գործում բոլոր մարդկանց սոցիալականացման վրա: Հաջորդ խումբը ներկայացնում են մակրոգործոնները. դրանք են պետությունը, էթնոսը, հասարակությունը, որոնք ներգործում են գերազանցապես տվյալ երկրում ապրող անձանց սոցիալականացման վրա: Սոցիալականացման գործոնների հաջորդ խումբն են կազմում մեզոգործոնները, որոնք միևնույն երկրում համատեղ ապրող կամ միասին հաղորդակցվող մեծ խմբերի սոցիալականացման պայմաններն են: Դրանք են քաղաքը, գյուղը, համայնքը, հեռուստատեսությունը, տեղեկատվական այլ համակարգերը և այլն: Միկրոգործոններն անձի վրա անմիջապես ներգործություն ունեցող գործոններն են, ինչպիսիք են՝ ընտանիքի, հասակակիցների և շրջապատի հետ շփումը, դաստիարակչական կրթական կազմակերպությունները, ինչպես նաև հասարակական, կրոնական և այլ նմանատիպ կազմակերպությունները:

Վ. Աֆանասևը գրում է, որ ընտանիքում և դպրոցում անձի ձևավորման գործընթացը իրականանում է նախևառաջ «տեղեկատվական ուղիով . անձին ուրիշների կողմից ստացվող համապատասխան տեղեկություն փոխանցելու միջոցով»: Մշակույթի, հասարակության արժեքների յուրացումը իրականանում է հասանելի տեղեկատվական միջոցների, մարդկանց հետ շփման միջոցով: Անձի արժեքային համակարգի ձևավորման գործում տեղեկույթի ազդեցության կառուցակարգերն _____

Андреева Г. М., Психология социального познания. М.: АспектПресс, 2000, 288 с.

Афанасев В. Г., Социальная информация и управление обществом. М.: Политиздат, 1975, 408 с.

Мудрик А. В., Социализация человека: Учеб. пособие для студ. высш. учеб. заведений, М.: “Издательский центр Академия”, 2004, 304 с.

անհրաժեշտ է առավել հանգամանորեն վերլուծել առանձին ուսումնասիրությունների շրջանակներում: Այսպիսով, ըստ մասնագիտական գրականության վերլուծության արդյունքների, անձնային արժեքների մասին պատկերացումները կարելի է ներկայացնել հինգ խմբով. արժեքը՝ որպես պատկերացում, դիրքորոշում, արժեքը՝ որպես պահանջմունք կամ շարժառիթ, արժեքը՝ որպես իմաստ և որպես հասարակության կենսագործունեության արդյունք: Անձի արժեքային համակարգի ձևավորման և շարժընթացի խնդիրը ընդունված է դիտարկել որպես հոգեկան զարգացման ընդհանուր օրինաչափություն: Այն անմիջականորեն կապված է տարիքային զարգացման առանձնահատկությունների հետ: Այդ գործընթացում հատկապես կարևորվում է ներքնայնացման գործընթացը՝ որպես սոցիալական խմբի արժեքներից անցում դեպի անձնային արժեքները: Արժեքային համակարգի ձևավորման գործում անհրաժեշտ է հաշվի առնել ինչպես օբյեկտիվ, այնպես էլ սուբյեկտիվ մի շարք գործոններ, որոնց թվում են սոցիալական պայմանները, անձի սոցիալականացման բնութագրիչները, շարժառիթային ոլորտի առանձնահատկությունները և անձնային բնութագրիչները:

3. ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ՄԵՋ ԱՐԺԵՔԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ ԴԱՍԱԺԱՄԻՆ

Արդի մանկավարժության կարևոր պահանջներից է երեխաների արժեքային համակարգի ձևավորումը:Կրթության նպատակը անհատին ոչ միայն գիտելիքներով զինելն է,այլև նրա մեջ բարոյական որոշակի հատկանիշներ ձևավորելը:Արժեքային կրթությունը ի սկզբանե կրթության անքակտելի բաղադրիչն է եղել: Ինչպես ամբողջ աշխարհում,Հայաստանում էլ այսօր արժեքային կրթությունը հասարակությանը հուզող խնդիրներից մեկն է: Մեզանում արժեքային կրթության նկատմամբ ավանդաբար ընդունված է հետևյալ մոտեցումը.դպրոցն ու ծնողները փորձում են բարոյական ժառանգությունը փոխանցել նոր սերնդին՝նրանց մեջ լավ արժեքներ սերմանելով և հաստատելով բարոյական այլևայլ հատկանիշների ճշմարտացիությունը: Արժեքային կրթության նոր՝արևմտյան մանկավարժության մեջ մշակված մոտեցման հիմքում մտածական հմտությունների ձևավորման սկզբունքն է: Ըստ սրա՝աշակերտներին պետք է օգնել իմաստավորելու որոշակի արժեքներ,այսինքն՝նրանց պետք է խրախուսել սեփական կենսափորձի և զանազան հարցադրումների միջոցով որոշել, թե իրենք ինչպիսի մարդ են ուզում դառնալ,ինչպիսի ավանդույթներ արժե պահպանել: Անշուշտ այս երկու

մոտեցումներն էլ խոցելի կողմեր ունեն:Առաջինը երբեմն զուտ քարոզչական և ձևապաշտական բնույթ է ձեռք բերում. երեխաները լսում են,թե որքան լավ բան է ազնվությունը,արդարությունը,տարեցների նկատմամբ հոգատարությունը և այլն,սակայն կյանքում տեսնում են արժեքների խախտումն իրենց ուսուցիչների,ծնողների կամ շրջապատողների կողմից:Բնական է,որ այդ դեպքում դրանք վերացական արժեքներ են մնում և նրանց կերպարի մաս չեն դառնում:Մյուս կողմից էլ՝ նոր մոտեցումը շատ ազատական է, և վտանգ կա, որ անձնական ազատ ընտրության և բարոյական ընդունված արժեքների ու պարտավորությունների միջև նախապատվությունը կտրվի առաջինին: Ուստի երեխաների մեջ համապատասխան արժեքներ ձևավորելու համար շատ կարևոր է այս մոտեցումների խելամիտ միահյուսումը:

Ինչպես վերը նշվեց՝ հանրակրթական դպրոցի յուրաքանչյուր ուսումնական առարկա ունի արժեքների ձևավորման համար անհրաժեշտ կրթական ներուժ:

Օրինակ՝ մայրենիի դասաժամին ազգային արժեքները երեխաներին ներկայացվում են առաջին հերթին գրական,պատմական հերոսների օրինակով,նաև ուսուցչի վարքագծով:Ուստի շատ կարևոր է առանձնահատուկ ուշադրություն դարձնել դասագրքերի նյութերին,ինչպես նաև ներկայացված հերոսների վարքագծի վերլուծությանը և դրա միջոցով որոշակի արժեքների բացահայտմանը:Սակայն վերլուծությունը ենթադրում է առաջին հերթին երեխաների գործուն մասնակցություն,այսինքն՝աշակերտները պետք է հնարավորություն ունենան ազատորեն արտահայտելու իրենց կարծիքը,զգացմունքները, որոշակի հարցադրումներ անելու,ընկերների հետ քննարկելու,դատողություններ անելու հերոսների վարքագծի մասին,գնահատելու և իրենց համար բացահայտելու այս կամ այն արժեքը: Օրինակ՝ Հայկը և Բելը տեքստն ընթերցելուց հետո աշակերտները պետք է բնութագրեն Հայկին,Բելին,նրանց արժեհամակարգը:Միջառարկայական կապեր ստեղծելով կերպարվեստի,տեխնոլոգիայի,երաժշտության և մայրենիի միջև՝ հանձնարարվում է աշակերտներին, ըստ ցանկության,կամ սպիտակ թղթի վրա նկարել Հայաստանը խորհրդանշող որևէ պատկեր կամ երգել Հայաստանի հիմնը կամ հայրենասիրական որևէ բանաստեղծություն ասել:Աշակերտներին հարց է ուղղվում՝ո՞վ է մեր՝ հայերիս նախահայրը,ինչու՞ է մեր երկիրը կոչվում Հայաստան,ի՞նչ խորհրդանիշեր ունի մեր պետությունը ,ինչ իմաստ են պարունակում իրենց մեջ Հայաստանի դրոշի երեք գույները:Եվ նա ազատ է իր կարծիքը հայտնելու. չի բացառվում,որ ոմանք բացասական գծեր տեսնեն Հայկի մեջ:

Մյուս կարևոր սկզբունքն այն է,որ արժեքը պետք է սովորել ոչ թե լսելով,այլ կիրառելով:Ուստի պետք է նրանց հնարավորություն տալ կիրառելու իրենց սովորած արժեքը,այն ձեռք բերել իրենց իսկ փորձառության հիման վրա:Դրա համար, պետք է ընտրել գործունեության այնպիսի ձևեր,որոնք համապատասխանում են երեխաների տարիքին: Շատ կարևոր է նաև խրախուսանքը:Խրախուսելով երեխային կարելի է ոգեշնչել,մղել որոշակի գործողությունների,ազդել նրա զգացմունքների վրա և այդպես նպաստել նրա մեջ որոշակի արժեքի ամրապնդմանը:

Հ. Միքայելյանը նշում է, որ բարոյական արժեքների ձևավորման մեջ մեծ ներուժ ունի մաթեմատիկան: «Բարոյական արժեքները և մաթեմատիկայի կրթական ներուժը» աշխատանքում նա հանգամանորեն խոսում է հանրակրթությունում մաթեմատիկայի ուսուցման միջոցով բարու, խղճի, արդարության, կյանքի նպատակի և բարոյական այլ արժեքների ձևավորման խնդրի վերաբերյալ:Ուշագրավ է, որ անցյալի հայ մաթեմատիկոսները նույնպես իրենց ուշադրության կենտրոնում են պահել բարոյական արժեքների ձևավորման հարցը՝ հիմնականում արծարծելով մաթեմատիկական խնդիրների միջոցով: Դրանցից են,օրինակ,Անանիա Շիրակացու Խնդրագրքի խնդիրները:Նրա խնդիրներից մեկում խոսվում է հայ-պարսկական պատերազմի և Զորակ Կամսարականի մասին:Այն, որ հիշատակվում են Կամսարականի քաջագործությունները, արդեն իսկ ազգային արժեք է:Հպարտ ենք,որ եղել են այնպիսի զորավարներ, որոնք կյանքի գնով պաշտպանել են հայրենիքը՝ դուրս մղելով թշնամիներին մեր երկրից: Մյուս խնդրում ասվում է. «Մի նավակ էի ուզում սարքել, բայց ունեի ընդամենը երեք դրամ,ուրիշ ոչինչ չունեի:Դիմեցի իմ մերձավորներին. «Տվեք ինձ ամեն մեկդ մի բան,որ կարողանամ սարքել նավակը»: Նրանցից մեկը տվեց նավակի կշռի երրորդ մասի [արժեքը],մեկը՝ չորրորդի, մեկը՝ վեցերորդի, մեկը՝ յոթերորդի և մեկն էլ՝ քսանութերորդի: Ես սարքեցի նավակը: Արդ՝ իմացիր, թե ընդամենը քանի՞ դահեկան (արժեքի) էր նավակը»:Այս խնդրի հիմքում ընկած է քրիստոնեական «սիրիր մերձավորիդ» պատվիրանը:Ցույց է տրված, որ բոլոր մերձավորները օգնում են՝ տալով գումար:Այս հանգամանքը թույլ է տալիս աշակերտների մեջ զարգացնելու բարության,գթասրտության,կարեկցանքի, անշահախնդիր օգնության,սիրո բարոյական արժեքները:Իսկ հաջորդ խնդրում էլ Շիրակացին ասում է,որ իր աշակերտն ընտիր խնձորներ է գնում և ցանկանում ընծայել իրեն:Սա խոսում է սիրո,հարգանքի,երախտագիտության արժեքների մասին:

Միքայելյան Հ.Ս.Բարոյական արժեքները և մաթեմատիկայի կրթական ներուժը,Ե. 2011

Շատ կարևոր է, որ աշակերտը սիրում և հարգում է իր ուսուցչին և ոչ թե վախենում, և փոխադարձ սիրո ու հարգանքի հիման վրա դասարանում ձևավորվում է բարոյական առողջ մթնոլորտ՝ նպաստելով նյութի արդյունավետ յուրացմանը: Բարոյական արժեքների ձևավորման համար հաջողությամբ կարելի է կիրառել խաղը,քանի որ երեխայի համար խաղն ունի այն նշանակությունը,ինչը մեծահասակների կյանքում աշխատանքը,ծառայությունը,հասարակական գործունեությունը:Ինչպիսին է երեխան խաղում,այդպիսին է լինում նաև աշխատանքում, երբ մեծանում է:Ահա թե ինչու ապագա մարդու դաստիարակումը նախ և առաջ սկսվում է մանկական խաղերից:Դպրոցում նպատակային խաղերի կազմակերպումը պետք է կատարվի մի շարք պահանջների հաշվառումով, դրանց պահպանմամբ:Հանրակրթական դպրոցում դա հիմնականում կատարվում է տարերայնորեն,աշակերտների նախաձեռնություններով:Երբ դասն անցկացվում է խաղի միջոցով, որի ժամանակ դասի թեմային համապատասխան պարագաներ են օգտագործվում, ուսուցիչը հանդես չի գալիս դասավանդողի դերում, իսկ աշակերտն էլ չունի սովորողի դեր: Մանկավարժը պետք է առաջադրի գաղափարը, դրանով գրավի աշակերտներին, կազմակերպի խաղը:Դրա համար անհրաժեշտ է խստագույնս հաշվի առնել խաղի մասնակիցների տարիքային, անհատական և ֆիզիկական առանձնահատկությունները:Խաղադերերի բաշխման ժամանակ պետք է առավելագույնս բավարարել ամեն մի աշակերտի սպասելիքները՝ նրան դնելով այնպիսի վիճակում, որն ամենից բարեհույսն է՝ նրա հնարավորությունների տեսանկյունից:Խաղերը մանկական կոլեկտիվի կյանքում շատ ապրումներ են առաջացնում,դրական ներգործություն են ունենում դպրոցական բարոյական չափանիշների յուրացման վրա:Խաղերի ընթացքում դպրոցականներին ուղեկցում են բացառապես դրական հույզեր,զգացմունքներ և զգայություններ,որոնց հիման վրա էլ առաջանում է դրական կողմնորոշում դեպի այս կամ այն արժեքը:

Դասապրոցեսում խաղը որպես ակտիվ ուսուցման կազմակերպման ձև ակտիվացնում է երեխաներին: Խաղի միջոցով կարելի է լուծել ուսումնական բոլոր խնդիրները՝ հատկապես կրտսեր դպրոցում բարոյական դաստիարակության խնդիրները: Հարկավոր է ոչ թե դասը բաժանել ուսումնական աշխատանքի ու խաղի, այլ պարզապես խաղը տարրալուծել ուսումնական գործընթացի մեջ և ուսումնական նպատակներն իրականացնել խաղի օգնությամբ ու խաղի միջոցով: Ուսուցման _____

Սարգսյան Վ., Խաղը և ուսուցումը, Գիտելիք 1, 2001, էջ 59

ընթացքում խաղի կիրառումը զարգացնում է երեխաների ուշադրությունը, օգնում է ուսուցչին ակտիվացնել անհամարձակ երեխային, որովհետև խաղալիս երեխան իրեն ազատ է զգում: Երեխային հնարավորություն է տրվում ազատ արտահայտելու իրենց մտքերն ու կարծիքները: Խաղային իրավիճակներում երեխան դառնում է առավել գործուն և ուշադիր: Խաղերը հաճախ տեղեկատվական բնույթ են կրում: Խաղի ընթացքում երեխան կարողանում է ազատ մտածել տվյալ հարցի շուրջ: Քննարկման փուլում նա լսում է ուրիշների կարծիքները և նույն հարցի վերաբերյալ տարբեր մեկնաբանություններ: Ինքն էլ հնարավորություն ունի համագործակցելու ընկերների հետ և սեփական որոշում կայացնելու: Արդյունքում երեխան ինքնավստահություն է ձեռք բերում և զարգացնում զննողականությունը:

Կրտսեր դպրոցականների զարգացման իմացական-ճանաչողական և հաղորդակցական գործունեությունը նպաստում է նրանց իմացական ու սոցիալական արժեքների ձևավորմանը,իսկ բարոյական և գեղագիտական արժեքները հիմնականում ձևավորվում են ընթերցանության համար նախատեսված գեղարվեստական նյութերի ուսուցման ընթացքում: Ընդհանուր առմամբ արժեքային համակարգի ձևավորումը երեխաների մոտ,նպատակ ունի ձևավորել անձ և քաղաքացի, որը պետք է՝

1.Գիտակցի սեփական մշակույթի՝ լեզվի,պատմության,արվեստի,ավանդույթների,ազ գային այլ արժեքների կարևորությունն ու նշանակությունը և լինի դրանց կրողը:

2. Հարգի Հայաստանի պետական խորհրդանիշները,լինի հայրենասեր,կարևորի ազգային հիմնախնդիրների լուծման գործում իր մասնակցության անհրաժեշտությունը:

3. Գիտակցի,որ գիտությունը , արդիական տեխնոլոգիաները , կրթությունը մեծագույն արժեքներ են ժամանակակից աշխարհում.

4. Գիտակցի,որ իր համար կարևորագույն արժեքներ են գիտելիքները , աշխատանքային հմտությունները, մասնագիտական վարպետությունը.

5. Կարևորի բարոյական չափանիշները և քրիստոնեական ու համամարդկային արժեքները,լինի ազնիվ, գթասիրտ, արդարամիտ, օրինապահ, բարեկիրթ.

6. Կարևորի գեղագիտական արժեքները , գնահատի գեղեցիկը, բարին և ճշմարիտը.

7. Գիտակցի իր տեղն ու դերը ընտանիքում և հասարակության մեջ , լինի նախաձեռնող, դրսևորի արժանավայել պահվածք.

8. Գիտակցի ծնողների, տարիքով մեծերի և փոքրերի, ընկերների և համայնքի նկատմամբ հարգանքի դրսևորման կարևորությունը.

9. Հարգի մարդու իրավունքներն ու հիմնարար ազատությունները, լինի մարդասեր,հանդուրժող, քաղաքակիրթ վերաբերմունք դրսևորի ուրիշ ժողովուրդների ներկայացուցիչների և նրանց մշակույթների հանդեպ.

10. Անաչառորեն գնահատի իր ուժերն ու կարողությունները' բացառելով սեփական

անձի թերագնահատումը կամ գերագնահատումը

11. Դրսևորի աշխատասիրություն , հնարամտություն, նպատակադրվածություն, արժևորի ու գնահատի սեփական և այլոց աշխատանքը.

12. Մշտապես հոգ տանի իր առողջության մասին, կարևորի մարմնակրթության դերը,հետևողական լինի առողջ ապրելակերպի և անվտանգ կենսագործունեության կանոնների կիրառման գործում:

4. ՈՒՍՈՒՑՉԻ ԴԵՐԸ ԱՐԺԵՀԱՄԱԿԱՐԳԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ

Կրթության գործընթացի լիարժեք իրականացման համար անհրաժեշտ են թե' ուսուցչի, թե' աշակերտի կողմից այս ուղղությամբ իրենց ունեցած պարտքի կատարման հանդեպ պատասխանատվության համապատասխան դրսևորումներ: Բնականաբար, գործընթացի առաջին և հիմնական պատասխանատուն ուսուցիչն է, որը կրում է նաև աշխատանքային պարտավորություններ: Սակայն ուսուցչի աշխատանքային պարտավորությունների իրականացումը, եթե խոսքը վերաբերում է բարոյական դաստիարակությանը, մասնավորապես' նրա պարտքին վերաբերող գործառույթների իրականացմանը, չափազանց բարդ գործընթաց է: Հիմնական բարդությունը կայանում է դրանց ոչ հստակության, դժվար վերահսկելիության և սպասվելիք արդյունքների ստուգման ու գնահատման դժվարության կամ անհնարինության մեջ: Իսկապես, եթե սովորողի մոտ գիտելիքի կամ կարողության

https://forum.armedu.am/forum

առկայությունը կարելի է ստուգել,գնահատել և վերահսկել բանավոր կամ գրավոր հարցման միջոցով, ապա բարոյական այս կամ այն որակի առկայությունը կարելի է ստուգել միայն այնպիսի իրադրության պայմաններում, որտեղ այդ որակը հնարավորություն ունի դրսևորվելու: Եվ դրսևորվելու դեպքում էլ ստուգվողը կարող է դիտավորյալ չցուցաբերել այդ որակը, կեղծել, եթե դա իրեն ձեռնտու չէ: Միաժամանակ, ուսուցիչը դաստիարակչական խնդիրները իրականացնելու շահագրգռվածություն և կոնկրետ պայմանագրով ամրագրված պարտավորություն չունի, իսկ չկատարված աշխատանքի համար էլ պատասխանատվություն չի կրում: Եվ դաստիարակության ամբողջ խնդիրը, ըստ էության, հանգում է ուսուցչի բարոյական մոտեցմանը. ինչքանո՞վ է նա կատարում ուսուցիչ լինելու իր առաքելությունը, որը առաջին հերթին դաստիարակ է: Ավելի նուրբ է աշակերտի կողմից կրթական խնդիրների իրականացման հարցում պատասխանատվության դրսևորման հարցը: Ի տարբերություն ուսուցչի, աշակերտը կարող է նաև չգիտակցել իր պատասխանատվությունը, մանավանդ՝ երբ խոսքը վերաբերում է դաստիարակության այնպիսի նուրբ ոլորտին, ինչպիսին պարտքին վերաբերող խնդիրներների իրականացումն է: Եվ այստեղ ուսուցչի պարտականություններին ավելանում է նաև աշակերտի մոտ համապատասխան գիտակցության ձևավորման խնդիրը:

Ուսուցչի իրավունքը և պարտականությունները նույնպես սահմանվում են իրավական պայմանագրերով: Սակայն նման մոտեցումը այս դեպքում չի կարող արտահայտել իրերի բնական ընթացքը, քանի որ ուսուցչի աշխատանքը ունի էական առանձնահատկություններ մնացած մասնագիտությունների համեմատությամբ: Բանն այն է, որ ուսուցչի գործունեությունը նպատակաուղղված է երկու խնդիրների իրագործման՝ ուսուցման և դաստիարակության, կամ ժամանակակից ձևակերպմամբ՝ գիտելիքների և արժեքների ձևավորման: Եվ եթե գիտելիքի ձևավորման մասով ուսուցչի գործունեությունը վերահսկելի է, ապա արժեքների ձևավորման մասով, ինչպես նշվեց վերևում, դժվար է մտածել վերահսկման խելամիտ որևէ միջոց: Հետևապես, ուսուցչի պարտականությունների կատարման հարցը՝ արժեքների ձևավորման մասով, իրավական դաշտից տեղափոխվում է բարոյական դաշտ: Խնդիրը բարդանում է նաև նրանով, որ կրթության զարգացման արդի միտումները գիտելիքի գերակայությունից տանում են դեպի արժեքների գերակայություն:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Վերլուծելով ժամանակակից մանկավարժության զարգացման միտումները՝ հասկանում ենք, որ կրթության հիմնական նպատակը կարողունակությունների ձևավորումն ու կյանքի իրական արժեքների գնահատումն է:

Արժեքային համակարգ ասվածը լայն հասկացություն է և նրա մեջ ներառված են մի շարք բարոյական հատկանիշներ:Արժեհամակարգի ձևավորումը իրենից ենթադրում է դժվարին ,տևական ,համբերատար աշխատանք և այս ոլորտում շուտափույթ կերպով և կարճ ժամանակում արդյունք ակնկալելը սպասելի չէ:Օրինակ՝ եթե մենք երեխայի հետ զրույց ենք ունենում ազնվության մասին կամ որևէ աշխատանք ենք տանում դրա շուրջ,ապա մենք մեկ շաբաթ կամ մեկ ամիս հետո չենք կարող տեսնել երեխան ազնիվ դարձել է,թե ոչ:Ի տարբերություն ուսումնական խնդիրների,նպատակների, օրինակ, եթե մենք՝ ուսուցիչներս սովորեցնում ենք որևէ մաթեմատիկական բանաձև կամ որևէ քերականական կանոն,ապա հստակ դնում ենք ժամկետներ մեկ շաբաթ հետո,մեկ ամիս հետո կարող ենք գրավոր աշխատանքների միջոցով ստուգել մեր աշխատանքի արդյունավետությունը,հասել ենք մեր նպատակին,թե՝ ոչ:Նույնը չի կարելի ասել դաստիարակչական խնդիրների վերաբերյալ,որովհետև շատ դեպքերում այդ խնդիրների լուծումը,սովորողի արժեհամակարգի ձևավորումը ակնհայտ է լինում շատ տարիներ հետո:Շատ դեպքերում մեր շրջանավարտները,երբ կյանք են մտնում,երբ մենք լսում ենք նրանց մասին,նրանց հաջողությունների մասին,նոր միայն համոզվում ենք,որ իսկապես արժեքներ ենք ձևավորել այդ սովորողի մեջ և ուրախությամբ փաստում ենք,որ այսեղ ներդրում ունենք մենք՝ ուսուցիչներս:Իբրև վառ օրինակ ուզում եմ բերել քառասունչորսօրյա պատորազմի մասնակիցներին՝ հերոսներին,որոնցից շատերը դպրոցական տարիքում գուցե որևէ բանով աչքի չեն ընկել,չեն կարևորվել,չեն դրսևորել որոշակի արժեքներ,բայց երբ հարկ եղավ,պահը եկավ, նրանք հատուցեցին իրենց կյանքով,նրանք գնացին այդ պայքարին և բնական է,նրանք կրում էին իրենց մեջ կայուն արժեքներ հայրենիքի նկատմամբ:Սա նշանակում է՝ մենք երբեք չպետք է շտապենք, այն ինչ մենք՝ ուսուցիչներս անում ենք ամեն օր,ամեն ժամ, քայլ առ քայլ,կաթիլ առ կաթիլ,դա միևնույն է իր արդյունքը տալու է,գուցե և տարիներ հետո,միևնույն է իր դրական արդյունքը ունենալու է:

Այսպիսով, այս աշխատանքում պետք է ունենալ մեծագույն համբերություն,նվիրում,համառ ջանքեր և ցանկալի արդյունքը չի ուշանա:

Եթե մենք կարողանանք կառուցել դպրոցներ, որոնք կձևավորեն արժեքներ աճող սերնդի համար, կունենանք աշխարհի ամենալավ և ամենաիմաստալից կրթական համակարգը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Սիմոնյա ն Ց. Ռ., Հայ մանկավարժության պատմություն, Ե.,1998թ., էջ 238

2. Միքայելյան Հ.Ս.Բարոյական արժեքները և մաթեմատիկայի կրթական ներուժը,Ե. 2011

3. Ուշինսկի Կ Դ., Մանկավարժական ընտիր երկեր, Երևան, 1958

4. Սարգսյան Վ., Խաղը և ուսուցումը, Գիտելիք 1, 2001, էջ 59

5. Андреева Г. М., Психология социального познания. М.: АспектПресс, 2000, 288 с.

6. Афанасев В. Г., Социальная информация и управление обществом. М.: Политиздат, 1975, 408 с.

7. Мудрик А. В., Социализация человека: Учеб. пособие для студ. высш. учеб. заведений, М.: “Издательский центр Академия”, 2004, 304 с.

8. Журавлева Н. А., Психология социальных изменений: ценностный подход. - М.: –зд-во «Институт психологии РАН», 2013. – 524 с.

9. Леонтев Д. А., Развитие личностных ценностей в общественном контексте, Вестник Московского Университета. Сер. 14. Психология. 1997. №1. сс. 20-27.

10. ՀԱՆՐԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ 3-4 /2017 ՆԱՆԵ ՁԵՅՆԱԼՅԱՆ ՀՀ պետական կառավարման ակադեմիայի ասպիրանտ. https://www.bok.am/sites/default/files/2020-12/2.pdf

11. https://mediamax.am/am/column/12925/

12. https://forum.armedu.am/forum

13.https://hy.wikipedia.org/wiki/